ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« » 2022 թ. N

Ձեր Մ/1159-2022

12.01.2022թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՆԱԽԱԳԱՀ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

ԷԼ. ՓՈՍՏ՝ FOI@FOI.AM

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2022թ. հունվարի 12-ի գրության՝ տեղեկացնում եմ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2021թ. ընթացքում ստացել է տեղեկատվություն ստանալու 245 հարցում, որից՝ 107-ը գրանցվել է որպես դիմում, 138-ը՝ գրություն:

Հարցումներից 135 -ն ստացվել է info@mlsa.am էլ. հասցեով, 54-ը՝ e-request հարթակով, իսկ 56-ը՝ թղթային տարբերակով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ պատասխանի բնույթ դաշտը համակարգում նախատեսված է բացառապես դիմումների համար, ինչի արդյունքում պատասխանի բովանդակության վերաբերյալ թվերը տրամադրվում են միայն պատասխանված դիմումների մասով: Ստացված 107 դիմումներից մերժվել է միայն 1-ը, քանի որ այն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ ստորագրված չի եղել:

Ինչ վերաբերում է սոցիալական ցանցերով ստացված հարցումներին, ապա դրանք ընդհանուր վիճակագրության մեջ ներառված չեն, քանի որ վերջիններս չեն համարվում պաշտոնական գրագրություններ և հետևաբար չեն գրանցվում «Մալբրի» համակարգում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն՝ հրապարակված տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով՝

- հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները՝ https://bit.ly/3H1SA8C, https://bit.ly/3rMz1Lk
- բյուջեն՝ https://bit.ly/3rLkTC1
- գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները՝ https://bit.ly/33MdE4E
- հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները՝ https://bit.ly/3nVIejs, https://bit.ly/3KGtRsV
- աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը՝ https://bit.ly/3KKqNw2
- հասարակական միջոցառումների ծրագրերը՝ https://bit.ly/3fTKoeL
- քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը՝ https://bit.ly/3GZtEyT

- աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները)՝ https://bit.ly/35mNdTK

- ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը՝ https://bit.ly/3qWwMWq

- սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները՝ https://bit.ly/3G0fI6n

Recoverable Signature

X

ԶԱՐՈՒՀԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: MANUCHARYAN ZARUHI 6801960849 **Զ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**